



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



Ծրագիրը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Իրականացնող՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա

Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Իրականացնող՝ «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ

## «ԿԱՊԱՆԻ ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

### «ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ ԾՆՆՂՕԳՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

«Կոռուպցիոն ռիսկերը ծննդոգնության ոլորտում» ծրագիրը իրականացրել է «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,407,000 ՀՀ դրամ, որից 1,202,000 ՀՀ դրամը տրամադրվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2015թ. հուլիսի 1-ից մինչև 2015թ. հոկտեմբերի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

ք.Կապան

2015թ.

## **«Կոռուպցիոն ռիսկերը ծննդոգնության ոլորտում» ծրագրի հաշվետվություն**

«Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2015թ. հունիսի 1-ից հոկտեմբերի 31-ը իրականացրել է «Կոռուպցիոն ռիսկերը ծննդոգնության ոլորտում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագիրն իրականացվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

«Կոռուպցիոն ռիսկերը ծննդոգնության ոլորտում» ծրագրի գլխավոր նպատակն էր բացահայտել և նվազեցնել ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ծննդոգնության ոլորտում կոռուպցիոն ռիսկերը: Ծրագրի նպատակն էր բարձրացնել Կապանի տարածաշրջանի կանանց իրազեկվածության մակարդակը՝ վեր հանելով կանանց կոնսուլտացիայի և ծննդոգնության բաժանմունքներում առկա խնդիրները, իրազեկել դրանց մասին հասարակությանը և համապատասխան մարմիններին: Այդ ուղղությամբ ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները և գործողությունները.

- Հունիսի 27-29-ին ծրագրի շրջանակներում Կապանի ծննդոգնության բաժանմունքի ծառայություններից օգտվող կանանց հարցման արդյունքների մոնիթորինգն (այսուհետ՝ Մոնիթորինգ) արդյունավետ իրականացնելու նպատակով փորձագետի կողմից անցկացվեց «Հարցաթերթ կազմելու, հարցազրույց վարելու, և հարցումներ իրականացնելու հմտություններ» թեմայով եռօրյա դասընթաց, որին մասնակցեցին 7 երիտասարդ աղջիկներ և կանայք: Առաջին օրը մասնակիցները ծանոթացան ծրագրի նպատակներին, սոց-հարցումների նշանակությանը և կարևորությանը: Երկրորդ օրը՝ հարցաթերթի կազմությանն ու բովանդակությանը, որն իր մեջ պարունակում էր այն բոլոր հարցերը, որոնց պատասխանները կտան Կապանում ծննդոգնության ոլորտի ընդհանուր պատկերը: Երրորդ օրը իրականացվեց հարցազրույց վարելու պրակտիկ դասընթաց, որտեղ մասնակիցները հարցումներ արեցին միմյանց հետ, համապատասխան թաղամասներով բաշխվեց տվյալների բազան:
- Հավաքագրվեց վերջին երկու տարվա ընթացքում ծննդաբերած կանանց տվյալների բազան:
- Օգոստոս ամսվա ընթացքում մասնակիցները անցկացրեցին հարցումներ նախատեսված հարցաթերթով, ինչպես նաև տեղի ունեցան առանձին հանդիպումներ այն կանանց հետ ովքեր օգտվել են կանանց կոնսուլտացիայից և ստացել են համապատասխան բուժօգնություն (օրինակ՝ հղիներ, վերջին 2 տարում ծննդաբերած կանայք):
- Մեպտեմբեր ամսին արդյունքները մուտքագրվեցին SPSS վերլուծական ծրագրի միջոցով և կազմվեց հարցման ընդհանուր պատկերը:

- Հոկտեմբեր ամսին Ծրագրի փորձագետի կողմից պատրաստվեց մոնիթորինգի արդյունքների զեկույց (այսուհետ՝ Ձեկույց), որն իր մեջ պարունակում է հարցման արդյունքները, եզրակացությունն ու առաջարկությունների փաթեթը, որը նախատեսվում է կտրամադրել ՀՀ առողջապահության նախարարությանը, հասարակական կազմակերպություններին, Սյունիքի մարզպետարանի առողջապահության բաժնին և համայնքում առողջապահության ոլորտում գործունեություն ծավալող կառույցներին:
- Հոկտեմբերի 1-ից սկսած «Սոսի TV» հեռուստաընկերության հետ համատեղ պատրաստվեց և ցուցադրվեց սոցիալական տեսահոլովակ, որն ուղղված էր հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդատան բաժանմունքի գործունեության թափանցիկ աշխատելառճի բարելավմանը:
- Կազմակերպվեց հանդիպում-քննարկում հարցումներն իրականացված հարցազրուցավարների, ծրագրի ղեկավարի և փորձագետի հետ, որտեղ քննարկվեցին հարցման արդյունքները և այն բոլոր հարցերը, որոնք ամենաշատն են հուզել հարցված կանանց:
- Հոկտեմբերի 13-ին «Սոսի TV» հեռուստատեսության կողմից կազմակերպվեց հաղորդաշար, որին մասնակցում էին Կապանի կանանց կոնսուլտացիայի բաժանմունքի վարիչ Անուշ Բալասանյանը և «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի նախագահ Քրիստինա Սաղաթելյանը: Հաղորդաշարի ժամանակ բաժանմունքի վարիչը պատասխանեց այն բոլոր հուզող հարցերին, որոնք առաջացել էին հարցումներն իրականացնելու ժամանակ: Քննարկվեցին մի շարք այլ հարցեր կապված կանանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանը ծննդօգնության ոլորտում անվճար ծառայությունների վերաբերյալ:
- Հոկտեմբերի 26-ին Ձեկույց նախագիծը քննարկվեց ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների հետ:
- Հոկտեմբերի 30-ին «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ը կազմակերպեց Ծրագրի ավարտական միջոցառում, որտեղ ներկայացվեց ծրագրի ընթացքում իրականացված գործողություններն ու արդյունքները: Քննարկմանը մասնակցեցին մի շարք ՀԿ ներկայացուցիչներ, Սյունիքի մարզպետարանի առողջապահության բաժնի ղեկավարը, Ծրագրում ներգրավված փորձագետներն ու մասնագետները, և այլ շահագրգիռ անձինք:

*Ծրագրի շրջանակներում կազմված Ձեկույցը կից ներկայացվում է սույն հաշվետվությանը որպես Հավելված 1:*

Ծրագրի ղեկավար՝  
30.10.2015

Քրիստինա Սաղաթելյան